X

ՀՈՎՀԱՆԻՍԻԿ ԾԱՐԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVI Դ.)

Մեզ զբաղեցնող ժամանակագրությունը, որը խորագիր չունի, գտնվում է Մատենադարանի №№ 2776 (էջ 266ա—271ա), 8245 (էջ 93ա—95բ) ձեռագրերում։ Ժամանակագրությունն ընդգրկում է 1572 մինչև 1600 թվականների անցուդարձի, գլխավորապես Ադրբեջանում և Վրաստանում տեղի ունեցած դեպքերի նկարագրությունը։ Բնագրում գտնվում են հետաքրքիր և բավական մանրամասն տեղեկություններ Թուրքական զորավար Մուստաֆա Լալա փաշայի 1578 թվի դեպի Անդրկովկաս կատարած արշավանքի, ապստամբությունների և պատերազմների, 1579 թվի մեծ սովի և մահտարաժամի, Օսմանյան Թուրքիայի դեմ XVI դարի 80—90-ական թվերին վրաց ժողովրդի ազատագրական հերոսական պայքարի և այլ հարցերի մասին, որոնց ոչ միայն ժամանակակից է եղել հեղինակը, այլև որոշ դեպքերի ականատես։ Այդ պատճառով էլ սույն բնագրի վկայությունները ուշագրավ են և գիտական արժեք ներկայացնող։

Նախքան այս բնագրի հայտնաբերվելը և առանձին հրատարակվելը, կորստից փրկելու նպատակով, այն, որպես ինքնուրույն գլուխ՝ «Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Ծարեցի Յովհաննէս վարդապետին» խորագրով, տակավին XVII դարում Ա. Դավրիժեցին իր «Պատմութիւն» աշխատության մեջ էր դրել[1]։ Այնուհետև XVII դարի մի այլ մատենագիր՝ Զաքարիա Սարկավագը ժամանակագրության հեղինակին կոչում է Ծարեցի Յովհան վարդապետ[2]։ Հետևելով սրանց և մեջբերում կատարելով Ծարեցու բնագրից, Զամչյանը հեղինակին կոչում է Հովհաննես Ծարեցի[3]։ Բայց սրանցից և ոչ մեկը չի նշել, թե խոսքը որ Հովհաննեսին է վերաբերում, Ջհանշահի որդի Հովհաննես Ծարեցո՞ւն, թե Մելքոնի որդի Հովհաննես(նույն ինքն Հովհանիսիկ) Ծարեցուն, որոնք տարբեր անձնավորություններ են։

Մատենադարանի № 2776 ձեռագրից ժամանակագրությունն առաջին անգամ հրատարակեց Մ. Մսերյանը. «Յոհանիսիկ վարդապետի համառօտ պատմութիւն» խորագրով[4]։ Հրատարակության բնագրի վերջում, տողատակի ծանոթագրության մեջ, հրատարակիչն իրավացիորեն նշում է, որ այս բնագրի

---

[1] Վաղարշապատ, 1896, էջ 605—619։

[2] «Պատմագրութիւն», հտ. Ա, Վաղարշապատ, 1870, էջ 12։

[3] «Պատմութիւն Հայոց» հտ. Գ, էջ 529։

[4] «Ճռաքաղ», 1859, Գ և Դ, էջ 69—76, 105—112, Ավելի ուշ, 1893 թվին Ա. Տեր-Միքելյանը, Ս. Անեցու ժամանակագրության հրատարակության հավելվածում «Ճռաքաղ»-ից արտատպեց այս բնագիրը, էջ 185—199։

հեղինակը ոչ թե Ջհանշահի որդի Հովհաննես Ծարեցին է, մահացած 1583 թվին, այլ վերջինիս աշակերտ, Մելքոնի որդի Հովհաննիսիկ (նաև Հովհաննես) Ծարեցին[1]։ Թեև առկա էր այս պարզ ցուցումը, սակայն այդ չխանգարեց հայագետ Ռ. Պատկանյանին «Հայ պատմագիրների երկասիրութեանց ցուցակ»-ում մեջ հետաքրքրող հեղինակին կոչել Օհան Ծարեցի, որը «գրեց իւր հայրենի Աղուանից տշխարհի համառօտ ժամանակագրութիւնը 1571—1600 թթ.։ Այս ժամանակագրութիւնը Ա. Դավրիժեցու պատմութեան 54-րդ գլուխը կազմելով՝ առանձին չտպագրուեցաւ.»[2]։ Ալիշանը թեև տարբերում է Հովաննես և Հովանիսիկ Ծարեցիներին, բայց նա սխալմամբ ենթադրում է, թե ժամանակագրությունն սկզբում կազմել է Հովհաննես Ծարեցին, որի դործը հետագայում շարունակել է Հովհանիսիկ Ծարեցին[3], և, բացի այդ, իրը ժամանակագրությունը սկզբից թերի է[4]։

Ինչպես ներքևում ցույց կտանք, այդ կարծիքը ևս պարզ թյուրիմացություն է։ Որպեսզի պարզ լինի ժամանակագրության հեղինակի հարցը՝ այն կազմել է մեկ, թե՞ երկու անձնավորություն, այլև, ինչ կապ դոյություն ունի Հովհաննես Ծարեցիների միջև, ապա թե Մատենադարանի № 2176 ձեռագրի ժամանակագրության բնագիրը արդյո՞ք Հովհանիսիկ Ծարեցու ինքնագիրն է, անհրաժեշտ է անդրադառնալ այդ հարցերի հետ աղերսվող նույն ձեռագրի, հետաքրքրությունից ոչ զուրկ, մի քանի հիշատակարաններին, որոնք դրված են տարբեր ձեռացագրերով, ասել է, թե տարբեր անձնավորությունների կողմից։ Ձեռագրի 32-րդ ա էջի հիշատակարանից իմանում ենք, որ Դավիթ երեցը, ինչպես ինքն է ասում, 1531 թվին «առի սուրբ դիրքս (Մխ. Գոշի Դատաստանագիրքը—Վ. Հ.) աստուածային [յ]իշատակ ինձ և ծնուղաց իմոց և հաւր իմոյ Ճա[հ]անշահին և մայր իմոյ Մուտամիշային...»։ 32-րդ բ էջի մի այլ հիշատակարանում, տարբեր ձեռացագրով դրված է. «Արդ՝ ես Դաւիթ էրէցս տվի իմ սրտի կամաւս զսուրբ դիրքս (Մխ. Գոշի Դատաստանագիրքը—Վ. Հ.) Յոհանէս վարդապետին...»[5]։ Այս հիշատակարանի ձեռացագրով դրված մի ուրիշ հիշատակարան հանդիպում ենք նույն ձեռագրի 258-րդ բ էջի դատարկ մասում, հետևյալ բովանդակությամբ. «ԸղՅոհանէսս Ծարեցի կարմիրս որ սեաւ ես խառնեցի յիշել խնդրեմ զիս ի բարին, յիշողքդ տոցջիք հազար զմէկին. ամէն»։ Այս երկու (32բ և 258բ էջերի) հիշատակարանների դրության միևնույն ձևը մեզ ենթադրել է տալիս, որ դրանք Հովհաննես Ծարեցու ինքնագիր հիշատակարաններն են։ Հետագայում այս ձեռագիրն անցնում է Հովհանիսիկ Ծարեցուն, որը 1600 թվին նորոգել է տալիս այն, ավելացնելով հետևյալը. «յիշատակ ինձ և կրկնակի ծնողացն իմոց Մելքոնին և Փիանդին...»[6]։ Եւ իրոք,

---

[1] «Ճոռաքաղ», 1859, Դ, էջ 112—113։

[2] «Փորձ», 1880, № 1-ի հավելված, էջ 35։

[3] Հայապատում, Ա, էջ 129, Սիսական, էջ 71։

[4] Նույն տեղ, էջ 129։

[5] Ժամանակագրության նախորդող հիշատակարանում (տես ծանոթ. 1-ին) Հովհանիսիկ Ծարեցին հաստատում է ոչ միայն այս վկայությունը, այլև նշում նվիրատվության տարեթիվը. «...մեծ վարդապետն Յոհանէս ի ՁԱ (1531) թվին ստացեալ էր սուրբ դիրքս դատաստանաց...». և որովհետև Հովհաննես Ծարեցին էլ մահացել է 1583 թ., (տես ներքևում, էջ 250), նշանակում է վերջինս մահացել է խորը ծերության հասակում, ինչպես վկայում է նաև Հովհանիսիկ Ծարեցին «և յալեորեալ ի յաւուրքդ հանդեաւ...»։

[6] Տես ներքևում, ծանոթ. 1-ին։

ձեռագրի բազմաթիվ էջերում նկատելի են նորոգման հետքեր (թերթ 32, 35, 256, 259, 260 և այլն)։ Ժամանակագրությանը նախորդող հիշատակարանից երևում է, որ Հովհաննիսիկ Ծարեցին ձեռագիրը ոչ թե ինքն է նորոգել, այլ տվել է նորոգելու։ Միևնույն հիշատակարանում նույնիսկ պահվել է նորոգողի անունը. «Նորոգեցաւ սուրբ կտակս ձեռամբ Ցալեքսանոս կրօնաւորի»։ Ուստի ժամանակագրությունը կազմում է այդ վկայության շարունակությունը և երկուսն էլ գրված են միևնույն ձեռագրով. այդ հանգամանքը մեզ եզրակացնել է տալիս, որ № 2776 ձեռագիրը նորոգելուց հետո, նրա վերջին դատարկ էջերում Ալեքսանոս Կրոնավորն ընդօրինակել է ինչպես Սյունյաց եպիսկոպոսներ Հովհաննեսի, Ստեփաննոսի և այլոց նամակն ուղղված Կոստանդին Բ Կատուկեցի կաթողիկոսին, այնպես էլ Հովհաննիսիկ Ծարեցու կազմած ժամանակագրությունը։ Ի դեպ, նշենք, որ Ալեքսանոս Կրոնավորը նաև նորոգել է Սաղմոսի և Երգ երգոցի Վարդանի մեկնության ձեռագիրը (Մատենադարան № 1121)։ Այդ երևում է երկու ձեռագրերի նորոգման ենթարկված էջերի և ժամանակագրության ընագրի գրության ձևից։ Եվ որովհետև վերևում նշված՝ № 1121 ձեռագրի հիշատակարանը հետաքրքիր է, մասնավորապես Հովհաննիսիկ Ծարեցու կենսագրականի առընչությամբ, ուստի բերում ենք մեզ հետաքրքրող մասը. «Դարձեալ ի թվիս Հայոց ՌԼ և է (1588) ես Յոհաննէս անպիտան թափառ և յետնեալս ամենայն բանասիրաց, ի սուրբ ուխտէն Թադէի վանք կոչեցեալ, ի յերկրէն Ծարա, ի տանէն Սիսակայ, յաշակերտ մեծ բարունապետին Ներսէսի Գնունեցոյն, որոյ յիշատակ նորին աւրհնութեամբ եղիցի։ Եւ ես տեսի զՍաղմոսի մեկնիչս և զԵրգ երգոցս հնացեալ բաղում ժամանակաց և յոլով թուխդ պակասեալ, յանարժան ձեռուք իմ ծրեցի Նստրիկս և Նորոդեցի ի վայելուչս յանձին իմոյ և յիշատակ ինձ և կրկնակի ծնողացն իմոց՝ հօրն իմ Մելքոնին և մօրն իմ Փիանդին և եղբարցն և քւերցն իմ ամենայնի ես առաւել հօրեղբօրն իմս Յոհաննէս բարունապետին*, որ բաղում աշխատանք ունի ի վերայ իմ և նորին յիշատակն աւրհնութեամբ եղիցի...»[1]։ Հովհաննիսիկ Ծարեցու այս հիշատակարանի ձեռագիրը տարբեր է վերևում նշված Ալեքսանոս Կրոնավորի ձեռագրից և կարծում ենք, որ այս հիշատակարանը ևս Հովհաննիսիկ Ծարեցու ինքնագիրն է։ Հետևապես վերջինս, այս հիշատակարանում թեև գրում է «...յանարժան ձեռուք իմ ծրեցի Նստրիկս և Նորոդեցի», պետք է հասկանալ, որ նորոգումը ոչ թե անձամբ Հովհաննիսիկ Ծարեցին է կատարել, այլ մեկ ուրիշը՝ Ալեքսանոս Կրոնավորը, և որ այդ արվել է նրա ցուցումով կամ հսկողությամբ։ Նշանակում է, ժամանակագրությունը չի հանդիսանում Հովհաննիսիկ Ծարեցու ինքնագիրը։ Հենց դրանով պիտի բացատրել, թե ինչու ժամանակագրության ընագրում մի երկու բառ բաց է թողնված, որովհետև ընդօրինակության ժամանակ գրիչը, ըստ երևույթին, դրանք չի կարողացել կարդալ։

Արդյո՞ք ժամանակագրությունն ամբողջությամբ Հովհաննիսիկ Ծարեցին է կազմել։ Ժամանակագրության սկզբում հեղինակը գրում է. «Իսկ արդ ի ԲԺ (12)-ն յամի կենաց իմոյս նըւաստ Յոհաննէսի, որ ծանեայ զիս... և ի մերս Հայոց թվականի ՌԻԱ (1572) էր...»։ Այստեղից եզրակացնում ենք, որ խոսքը վերաբերում է ոչ թե Հովհաննես Ծարեցուն, որը, ինչպես վե-

* Իրականում Հովհաննես Ծարեցին Հովհաննիսիկ Ծարեցու հոր հորեղբայրն է։

[1] № 1121, էջ 271ա և բ։

բևում տեսանք, տակավին 1531 թ. իր եղբոր Դավիթ երեցից № 2776 ձեռագիրը նվեր էր ստացել, այլ Հովհաննիսիկ Ծարեցուն. նշանակում է վերջինս ծնվել է 1560 թվին։ Հետևապես թյուրիմացություն է Ալիշանին այն կարծիքը, թե այս թվականը վերաբերում է Հովհաննես Ծարեցուն, և ապա, իբր վերջինս գրել է «1572 թուականէն սկսեալ իբր տասն տարուան պատմութիւն»[1]։

Այսպիսով, ամբողջ ժամանակագրության հեղինակը Հովհաննիսիկ Ծարեցին է։ Բայց ո՞վ է այս անձնավորությունը և արյունակցական ի՞նչ կապեր է ունեցել Հովհաննես Ծարեցու հետ։ Այդ ցույց տալու համար մեր ձեռքի տակ գտնված հիշատակարանների[2] հիման վրա կազմեցինք տոհմական հետևյալ ծագումնագրությունը.



Հովհաննիսիկ Ծարեցու մասին շատ բան չգիտենք. վերևում նշված հիշատակարաններից երևում է, որ նա եղել է Թադեի վանքի միաբան, աշակերտել է Ներսես Գնունեցուն և Հովհաննես Ծարեցուն, ստացել է վարդապետական աստիճան, զբաղվել ձեռագրեր նորոգելով։ Մատենադարանի № 2519 ձեռագրի մի հիշատակարանից երևում է, որ նա ձեռագրեր է ընդօրինակել տվել և հավաքել[3]։ Սյունյաց Սոթ գավառի Աղքիլիսա գյուղի ս. Աստվածածնի եկեղեցու՝ հարավային պատի վրա դրված արձանագրության համաձայն[4] այն կառուցել է Հովհաննիսիկ Ծարեցին[5]։ Թե ե՞րբ է մահացել վերջինս, հաստատ չգիտենք, սակայն 1621 թվի մի կալվածագրում գտնվում է մի կնիք, որտեղ գրված է. «Յովհաննէս վարդապետ Ծայրեցի»[6]։ Եթե այստեղ նկատի չի առնվում մեկ ուրիշ Հովհաննես Ծարեցու, նշանա-

---

1 Հայապատում, Ա, էջ 129։

2 Տե՛ս վերևում և ծանոթ. I-ում նշվածները։

3 Հիշատակարանում կարդում ենք. «Զվերջին ստացող քաղուածոյ աւետարանին Ղուկասու Ծայրեցի Յոհանէս վարդապետս յիշատակ հողոյ իմոյ և կրկնակի ծնողացն իմոց և բաղմերախտ ուսուցչին իմոյ Յոհաննէս մեծ բարունապետին...», (էջ 3բ)։

4 Մ. Սմբատյանց, «Տեղագիր Գեղարքունիք», Վաղարշապատ, 1893, էջ 628։

5 Տես և հմմտ. կարապետ եպիսկոպոս «Նիւթեր հայ մելիքութեան մասին», Բ պրակ, Էջմիածին, 1914, էջ 82։

6 Յ. Յ. Թոփճեան, Ցուցակ ժողովածուաց Գադեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, էջ 24։

կում է՝ նախ, այդ կնիքը Հովհաննիսիկ Ծարեցուն է, երկրորդ՝ վերջինս կենդանի էր տակավին 1621 թվին։

Բնագրին վերաբերող մի շարք պարզաբանումներ կտանք ծանոթագրություններում։

Հրատարակության համար հիմք ընդունեցինք № 2776 ձեռագրի տարբերակը, որտեղ ժամանակագրությունն ընդհանուր առմամբ լավ է պահպանված, քան № 8245 ձեռագրում, որն ընդօրինակվել է 1847 թ. Թրիլիսիում։ Վերջին տարբերակի տարբերթերցվածները, թեև էական չեն, այնուամենայնիվ, նշեցինք տողատակ։

X

Արդ՝ զնեզութիւն[1] և զդառնութիւն վշտաշատ ժամանակիս 266 բ
ով կարէ ընդ գրով արկանել, ով եղբարք, բայց փոքր ի շատէ
ողբալով ասասցուք։ Քանզի յաղագս ծովացեալ մեղաց իմոց յազգն
մահմետականաց, որ ըմբոնեալ էին զդաւառս Հայոց, աւերելով
5 և դերելով զամենայն շէնս և զանշէնս[2], և տիրեալ ընակէին ընդ
ամենայն տեղիս, քանզի անչափ և այնքան խիստ էր լուծ հարկի
նոցա, մինչ զի բազումք զրկեալք ի ստացուածոց և ի հայրենի
ժառանգութեանց և դեռ ևս ոչ կտրէին զերծանել, այլ և ոչ դոյր
փախըստեան ճարակ և թաքըստեան[3] տեղիք, այլ ամենայն մարդ
10 ի տարակուսանս կայր և երանի տային մեռելոցն և ոչ այս կեն-
դանեացս. քանզի ոչ եթէ սակաւ ժամանակ էր բռնութիւն սոցա
ի վերայ դաւառաց, այլ բազում և յերկար յամօք. քանզի որդիք
հարցն, որ անկէալ էին ընդ լծով ծառայութեան նոցա, ծնան և
նոքա որդիք և որդոց յորդիս, մինչ ի բազում յազգս, որ ոչ
15 թվի և ոչ ևս մխիթարութիւն յազգիս Հայկածին, այլ դեռ ևս
կամք դլխակորեալք ի ներքոյ չար ծառայութեան նոցա և ի հայ-
րենի գաւառացն արտաքսեալ, ցիր և ցան եղեալ ընդ ոլորտս
տիեզերաց և իշխանազինք և ազատածինք, ծառայք լեալ ազգին
մահմետականի։ Այլ և եկեղեցիք կոխան եղև այլազգեաց, զորս
20 քակեալ և զքարինս տանէին ի շինութիւն բերդից, և զորս շէն
ՇՆացեալ էր ինքեանք պղծագործութեամբ և երիվարք և ջորիք
իւրեանց պարէին ի նոսայ։ Եւ մեք գլուխ ի կոր և բազում տա-
րակուսանօք լցեալ, վասն այսպիսի աղետալի կսկծանացս և ոչ
ուստէք երևի հնար օգնականութեան։ Եւ այս յառաջնոցն էր
25 դրեալ[4]։

Իսկ արդ[5] ի ԻԺ (12)-ն յամի կենաց իմոյս՝ նըւաստ Յոհա-
նէսի, որ ծանեայ զիս, վայ ինձ, զի զպատուիրանաւն յԱստուծոյ
ոչ գնացի, և ի մերս Հայոց թվականի ՌԻԱ (1572) էր, ոմն թա-
գաւոր յԱտրպատականի, ի յայլազգաց Դահման անուն շահ կո-
30 չեցեալ, ի Կարմրագլխաց, յոյժ խաղաղասէր և անյագահ, մինչ
ասիւր ի ծերագունից, թէ ԵԺ (15)-ն յամի հարկն ոչ է առեալ ի
յերկրէ իւրմէ։ Այլ և զպաջ[6] վաճառականաց և զմաքս, զոր վասն
իւր ի գանձի իւրում ժողովեալ լինէր երարձ աշխարհէ տէրու-

3 աղդն։ 9 փախստեան, ճարակ և թաքըստեան չիմ։ 14 որդւոց։ 15 թուոի, հար-
կածին փխ. Հայկածին։ 19 մահմէդականի։ 28ոչ գնացի չիմ, թուականի։ 31 հնդետա-
սան ամի։ 32 զքաջ փխ. զպաջ։ 33 յաշխարհէ։

թեանն իւրոյ։ Այլև կանայք լիտիք, որք ի քաղաքի նստէին և հրապարակայայտ զբաղումս խոտորեցուցանէին և հարկ տային յարքունիս և դանասելի յօճրագործութիւնք Սոդոմական յախտից բնաւորեալ ի Պարսիկքն, զայն ամենայն վճիռ հրամանաւ խափանեաց և ուրէք թէ երեէր չարաչար տանջանօք սպաննել հրամայէր։

Եւ ի թվիս ՌԻԴ (1575) մեռաւ ասացեալ շահն Թագաւորեալ յամս ԾԱ (51)։ Եւ յոմն ի որդոց նորայ Իսմայէլ անուն, զոր յառաջագոյն ի հօրէ իւրմէ յարդելեալ կայր ի կլայ, վասն իրաց ինչ յանդգնութեան[7], և այժմ ելեալ Թագաւորեցաւ ի տեղի հօր իւրոյ և սուր ի գործ արկեալ սպան զեղբարս իւր հարազատ թվով է (7). և սկսեալ զնախարարս զօրաց իւրոց սպանանել՝ զոմն յայտնի և զոմն ի գաղտնի, մինչ դրէ թէ սպառել ջանայր զամենայն յադգն Պարսից։ Եւ զայս ծանուցեալ տիրատեաց Պարսիցն, թէ հասեալ է կորուստ յանձանց իւրեանց, ոմն Ցամիրխան յանուն յիշխան Թավրիզոյ և Մահմետ || ոմն, իշխան Սհաթին՝ Ցարարադեան[8] գաւառի, մականուամբ Թօխմախ կոչեցեալ և այլք ոմանք, որ ոչ դիտեմ հաւաստեաւ զտնուանս նոցա, միաբանեալ ընդ յարրանեկաց Ցիսմայէլին և սպանին զնայ ի գաղտնի, ոչ դիտելով զօրաց նորա զմահ Իսմայելին և ի դիվան դատաստանի ոչ նստելն, ասացեալ լինէր յոմանց, թէ լրտեսութիւն գնացեալ է այլոց թագաւորաց վիճակ և դառնալոց է. մինչև ի յամ մի, զայս կարծեցեալ լինէր։ Եւ յետոյ ստուգիւ իմացեալ յամենեցուն զկորուստ նորին, և դարձեալ յամենեքեան միաբանեալ գնացին ի Խորասան, և բերին զոմն Խուտարանդայ կոչեցեալ շեխ գոլով, եղբայր Ցիսմայէլին, և որդի նոյն Դահմազ շտին, կարդեալ ի հաւրէն իւրմէ տէր աշխարհին Խորասանայ[9], զնայ թագաւորեցուցին ի տեղի Իսմայելին։ Բայց անյարի և վատթար ի գործս թագաւորութեան և պակասեալ ի լուսոյ աչս։ Ի սորայ Բ (2) յամի իշխանութեանն, թագաւորն Իւզանդիոյ, յազգաւ Ցաւթմանի, Մուրատ յանուն[10], որ է խոնդկեար ասի, հրաման եհան զօրաց իւրոց գալ ի վերայ աշխարհիս Կարմրագլխոյն։ Եւ ելեալ ոմն զօրագլուխ Լալայ կոչեցեալ, բազում զօրօք եկն և եհաս ի յերկիրն Ցարարադեան, և գերեաց ընդ հայ և ընդ տաճիկ[11] թվով ԿՌ (60000) և տարեալ խաղացոյց ի յերկիրն Հոռոմոց[12]։ Եւ ի միւս յամին դարձեալ շարժեալ խաղաց ի վերայ Վրաց և հասեալ ի Փայտակարան քաղաք, որ է Տիխիս, և շինեաց բերդս ի նմայ, և յամրացոյց անդ յարս բազումս պատերազմողաց։ Եւ զոմն Իագրասունի թագաւոր Վրաց, Սիմոն[13] կոչեցեալ, որ երբեմն վասն անհնազանդութեան ըմբոնեալ էր ի յառաջ ասացեալ Դահմազ շահէն[14], և տկարացեալ ի հաւատոցն և կայր առ նա ընդ ձեռամբ։ Իսկ ի թագաւորելն Իսմայէլին

---

1 ի չիք։ 5 սպանանել։ 7 թուրխս։ 8 ոմն, յորգլոց։ 9 յարգէյեալ։ 12 թուով։ 13 ի չիք։ 16 անուն, Թաւրիզոյ, Մահմէտ։ 17 Ցարարատեանն։ 18 որք։ 19 զնա։ 20 Իսմայէլին, զիւան։ 22 մինչ։ 25 Խուդարանդայ։ 27 հօրէն։ 28 զնա, Իսմայէլին։ 29 լուսոյ։ 31 Ցաթմանի։ 34 Ցարարատեան։ 35 թուով։ 38 նմա։

շնորհեաց զհայրենի իշխանութիւնն և զտեղիքն Սիմոնին, գնալ
իշխել իւրոցն և մնալ յօրինօքն Մահմետի։ Եւ նա գնացեալ ի
տեղի իւր ի Տփխիս, յանդիմանեալ եղև յառաջնորդաց և քահա-
նայից իւրոց, մանաւանդ ի կնոջէն և ի յընդանեացն իւրմէ,
5 յուրացող և յաղերախտ կոչելով զնայ և ոչ հաղորդելով ընդ նմայ։
Ի յայսմանէ ստրջացեալ նորա զղջացաւ զտաճկութիւնն, և դա-
ւանեաց վերըստին զխաչն Քրիստոսի յերկրրպագելի. և զխաչելեալն
Քրիստոս, յԱստուած ամենայնի։ Եւ լուր եղև համբաւս այս
առ Պարսիկքն։ Եւ զի մեռեալ էր Իսմայէլն, և այլքն ոչ ինչ կա-
10 րելով առնել նմայ շնորհուկս եղեն նմայ կալ ի քրիստոնէութեան,
գոնէ միայն հաւատարմութիւն և մտերմութիւն արասցէ ընդ
տունս շահին։

Եւ այժմ Լալայն փախոյց զՍիմոնն այն, և շինեաց ի յեր-
կիրն նորա բազում բերդս, զոր ոչ գիտեմ զյոճն դրել, վասն
15 անտես լինելոյն մեր ի տեղեացն։ Սակայն լաւք, թէ զՏփխիս
զՏումանիս, զԳօրի և զԼօռէ, և այլ տեղիք շինեաց բերդս և եթող
ի նմայ զօրս, և ինքն յանցեալ ի Ցալանս գնաց, ի դուռն Եր-
կաթի[15], և շինեաց անդ ևս բերդ և ասի Դամուր դաշ. և եդ զօրս
ի նմայ բազում և զօրագլուխ յոմն Ցօսման յանուն[16], յոյժ հնա-
20 լաւոր և անողորմ. և ինքն դարձաւ առ թագաւորն իւր և սա-
ռակեցաւ ի նմանէ ի խօսս քսուաց, բայց վրէժխնդրութիւնն
Աստուծոյ ոչ ետ նմա կեալ վասն արեանց յանմեղաց։

Իսկ ի թվականիս ՌԻԸ (1579) եղև սաստիկ և մեծ տարա-
ժամ մահ ի Ցատրպատական և ամենայն Ցաղուանս և կոտորէր
25 զբազումս ի յամենայն ազգեաց, մինչ բազում տունք անտէ-
ր-ունչք և բազում հայրք և մայրք անզաւակ մնացին։ Եւ եր-
կիրս Ցաղուանից ի մէջ այսպիսի վանկի գոլով, զմեռեալսն սգա-
լով, և զկենդանի զանկեալսն և զինքեանք ևս հոգալով մտածմամբ ասէին՝ ոհ թէ զերծանիմք ի տարաժամ մահուանէս, թէ ոչ։

30 Ի այս յեղակարծ ժամուս յանկարծակի եկն եհաս վիրագն
և զօր մահուն մոռացեալ || Ցօսմանն այն, զոր յառաջագոյն ձեռն 267 բ
յարձակեալ առ Թաթարսն, որ Ղայթաղ ասի, և ամենայն Կով-
կասային լեռնական Լակղիքն ժողովեալ առ ինքն ի Դամուր դաշ,
բազում և անթիւ յարեանարբու հեծելօք, և նոքօք եկ և եկն այս
35 կոյս Կուր գետոյն, և զիշխանն Գանճայոյ և Պարտաւոյ փախըստական արարին։ Եւ ինքեանք ոլորեալ ընդ դաշտս և ընդ լերինս՝ զԳանճայ և զԲարտայ, զՋարաբերդ և զԽաչէնք, զՎարանդայ և զԻիղակ ի Զարեքի կոչեցեալ գետոյն մինչև ի գետն Ցերասխ ի միում աւուր յաւարի հարեալ գերեցին և զանհաճոյսն սրով սպա-
40 նին և զկնի Դ (4) և Ե (5) աւուրց դարձան ի տեղի իւրեանց[17]։

Դարձեալ[18] ի սոյն յամ ընդ երկուց պատժոցս՝ մահուն և սրոյն, եղև ահագին և անասելի սով սաստիկ, այնքան մինչ մար-

---

2 Մահմէտի։ 4 յընտանեացն։ 5 ուրացող, ազերախտ, զնա։ 7 վերստին։ 14 զյոճ։ 15 լուաք։ 16 զԴումանիս, զԳորի։ 17 անցեալ։ 19 ոհ։ 23 թուականիս։ 24 կոտորէր։ 25 ազգաց։ 26 յերկիրս։ 27 Ցաղուանից։ 35 փախստական։ 37 զԳանձայ, զՋարաբերդ։ 38 Զարէքի, Երասխ։ 42 մարդիկ։

դիք գաղանապէս անկան ի հմայկերութիւն, վասն յորը մնալոյն,
ի մահոյն և վասն անինչք և անյարկ շրջելոյն ի գերչացն։ Քանզի
ամենայն գաւառք Հայոց, որ ընդ իշխանութեամբ Կարմրագըլ-
խոյն կայր, քակեալ աւերեցաւ։ Եւ թէ ուրէք յանկեան մնացեալ
5 լինէր շինութիւն զետեղէին տնանկք և մերկք, այրք և կանայք,
ծերք և երիտասարդք, տղայք և յաղջկունք և առանց յօթևանի,
արտասուալից դիմօք շրջէին ի դրունս յօտարաց և ի յերթս այ-
լոց, առ ի խնդրել զկերակուր յանձանց իւրեանց և ի ոչ բաւելն
կերակրոց յուժնղքն ի նոցանէ մտանէին գաղտ ի փարախ խա-
10 շանց և ի դոմս յարջառոց և ի յոչ կարելն զենուլ զմեծամեծ
յանասնոցն առ ի ոչ ունելոյ սուր ինքեանց և յուժ անձանց ըմ-
բրոնէին յորթս դիեցիկ ե գառինս մատաղ և յուլունս և պատա-
ռէին զկող նոցա և հանեալ զսիրտ և զվորոտիք նոցա ուտէին
հում. և ելեալ գաղտ գնային, և ոչ ոք կարծիս ունելով զայս ի
15 նոցանէ լինել, մինչ տեսեալ յոմանց զնոսա յայնպիսի գործ և
հաւաստեալ դիտացին զայս։ Իսկ անղօրքն ի նոցանէ ի կուլտս
յաղրից անասնոց և ձիոց յորոնեալ գտանէին հատս գարոյ և ու-
տէին. այլ և ոչ գիտելով սրրոյ և անսրրոյ ի հերուն հետէ և ի
վաղ ժամանակէ ի փողոցի յանկեալ ոսկերք վեր առեալ ի քարի
20 եդեալ և քարիւ վոշի առնէին և ի բերանն իւրեանց արկանէին
և մռընչէին. այլ և հնացեալ վոկ կաշէ և մաշեալ աբրեխ, ի բեկ-
սոր ինչ խեցոյ ի յեվոցի եդեալ և առեալ ուտէին։ Վայ տեսո-
ղութեանս եղբարք։ Եւ իբրև եղև գարունն սփռեցան յաղքատքն
ի յերեսս դաշտաց, սկացեալ մարմնով, որպէս զերամակս յայ-
25 ծեաց և իբրև զջոլորիբս հօտից, ուտելով զբանջարս վայրի և
զխոտս կանաչ և ոչ յագենային, քանզի կոչեցեալ էր յերկիր սով
և զօրութիւն հացի բեկեալ ըստ մարգարէին։ Մանաւանդ յուռուս-
ցեալ ի գլխոցն մեռանէին յոմանք ի տեղի յարօտիցն[19], որ ոչ
կարէին դառնալ և յոմանք եկեալ ի գեղամիջի, ի տակս յորմոց
30 և ի յանկիւնս տանց աւերուածոց մեռանէին։ Եւ թէ լինէր ոք
երկիւղած յԱստուծոյ, առեալ ի դիակացն Թ (9) և Ժ (10) և այլ
յաւելի ի վիհ ինչ կամ ի հոր արկեալ հողն ի վերայ փըլուցեալ
ծածկէր և թէ ոչ մնայր անթաղ։ Եւ լուր լինէր. բազմաց թէ այս
յանուն տանուտէր կամ մեծատան որդի մեռեալ և դի նորա ահա-
35 ւանիկ այս նիշ տեղի է. և լուեալ բազումք ի սիրելեաց և ի ծա-
նօթից նորա, և եղուկ և վայ կարդային յանձանց իւրեանց. ևս
և զթաղիլն ի վաղն ձգէին և վաղուէն ի միւս վաղն վասն բա-
զում ձանձրութեանցն. և դարձեալ լսէին ի յոմանց, թէ դին այն
պատառեալ ի գաղանաց ցրուեցան ոսկերք նորա. և զայս լուեալ
40 անհոդ լինէին և այսպէս մնայր անթաղ։ Եղուկ թշուառականիս և
պատմութեանս, եղբարք[20] ||։ Քանզի բազումք ի պիղծ մսէ, զա- 168ա
զիր շանց և կաւաւաց կամաւ յաղեալ եղեն և մարմնոց մարդկան
ևս. քանզի ի սահմանս յԱմարասայ, յերկիրն Վարանդոյ և Դի-

1 հմայկերութիւն։ 6 աղջկունք։ 8 և չիք։ 11—12 ընրոնէին։ 12 դիեցիք։ 14 գնային։ 16 կուսս։ 17 դաբուոյ։ 21 մռնչէին, տրեխք։ 23 յաղկաքն։ 24 ի չիք։ 25 զջոլիսս։ 32 փլուցեալ։ 37 վաղուէն։ 40 թշուառականիս։ 42 կատուաց։

զակայ դեղի միում,ումեմն մեծատան միամաւր որդի մի դոլով
եաւթն յամեայ, և կանայք այրիք մերձակա գեղաւրէից ժողո-
վեալ բնակելով մերձ մեծատանն, կերակրելով ըստ պատահմանն
ի մեծատանէն, յաւուր միում պատրանօք զտղայն ի տուն իւր-
5 եանց կոչելով կանացն և սպանեալ, զմի յոտն հանդերձ յան-
դամօքն կերեալ. և յերեկոյին ծնողացն յորոնեալ, ե ի տուն
յայրեացն դտանելով զկիսակտուր դիակ ադային իւրեանց։ Այլ
և լուաք ես, թէ ծէր ոմն զմարմին դստեր իւրոյ կերեալ է ի նոյն
յերկիրն։ Եւ այլ ամենայն տեղիք այսպիսի եղև վիշտ սովոյն ի
10 Ռ և ԻԸ և ԻԹ (1579, 1580) թվականիս։ Վա՜յ ինձ պատժապար-
տիս, զի մահուամբ և սրով և սովոյ կոտորեալ մարդկան մարմ-
նոց գաղանք այնքան կերեալ, մինչ զի տնասուն շունք վայրե-
նացեալ յարտաքոյ շինի զկենդանի մարդիք որսային։ Եւ դայլք
ի ճանապարհի ևս և շինամիջի ի տուն մտեալ զմարդիք ի ննջման
15 յարտաքս քարշէին և ուտէին։ Եւ ի՞մէջ խաշանցն մտեալ
զխաշնարածն յուտէին և խաշանցն ինչ ոչ մեղանչէին։ Եւ զթիւ
մահուամբ սովով և սրով մեռելոցն և դերելոցն ընաւ ոչ կարեմ
ընդ թիւ բերել և գրով արկանել, բայց թէ իմ զքարտէսս և զմէ-
լանս առաջի ձեր յարկից ըստ դպրացն Դաւթի, որ առ Ցերու-
20 սաղէմիւ։

Իսկ ի ՌԼԲ (1583) թվականին դարձեալ հրաման եղև ի Մու-
րատ խանդկեարէն զօրապետաց և զօրաց իւրոց՝ ելանել ի վերայ
Ցէրևանայ և առնուլ զնա[21]։ Եւ եկին իսկ և աւերեցին, և բազում
եկեղեցիք քակեալ, զքարինս ի շինումն բերդին տանէին, որ և
25 կամեցան զմեծ եկեղեցին, որ Ցերկու երեսի[22] ասի, ևս || քակել։ Իսկ 268 բ
յոմն վարդապետ Ցառաքեալ յանուն, որ և յետոյ կաթողիկոս
եղև[23], յիշատակ նորայ աւրհնութեամբ եղիցի, եմուտ առաջի Ֆար-
հատի զօրապետի զօրուն և ոչ ետ թոյլ քակելոյ զեկեղեցին. բայց
վա՜յ լսելեացս և պատմութեանս, զի աւուրս Լ (30) ջորիք և
30 երիվարք և բազում Տաճիկք ինքեանց յանծանօթք բնակեցան
եկեղեցին։ Եւ եղև յասացեալն ի մարգար[է]էն՝ զի մտին հեթա-
նոսքն ի ժառանգութիւնն Աստուծոյ և պղծեցին զտաճար նորա
սուրբ։

Ի սոյն թվականի եղև վախճանք մեծ և երանաշնորհ վար-
35 դապետին մերոյ Ցոհանիսի։ Եւ զի էր նա ի յերկրէն Ծարայ,
Փոքր Սիւնիս կոչեցելոյ, ի վանիցն Դադիու[24] սուրբ Ցառաքելոյն,
որդի յումեմն աղատի և բարեբարոյի Ջհանշահ կոչեցելոյ, յազգէ
Դօփեայ և Հասանայ։ Եւ էր նայ յաշակերտ մեծ վարդապետին
Ղուկասու Հախպատեցոյ[25], յոյժ սրբասէր և աստուածասէր, հեզ
40 և աղօթող, քարոզող յուղղափառաց և յանդիմանող ընտահակաց,
սիրող ուղղութեանց և պատուող տօնախմբութեանց, յոյժ ըն-
թերցասէր և գրասէր, մինչ զի բազում գրեանս ետ գրել[26] յիւրն

---

1 միամօր։ 2 է (7), մերձակայ դեղօրէից։ 5 կանանցն, ոտն։ 7 դիակս։ 10 և ԻԸ և չիմ, թուականիս։ 13 մարդիկ։ 14 զմարդիկ։ 21 թուականին։ 25 երէսի։ 27 օրհնութեամբք։ 27—28 Ֆյարհատի։ 34 թուականի։ 35 Ցովհաննիսի։ 36 Տաթևոյ։ 38 Դոփեաց, նայ։ 39 Հախպատեցւոյ։ 40 յանդիմանող ստահակաց։ 41 սիրող, պատուող։

յիշատակ և այլ սպասք և զարդ եկեղեցոյ յոլով։ Եւ յալևորեալ լի
յաւուրքք հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս ի յունվար[27]
ամսոյ Ի (20) ի ՌԼԲ (1583) թվականիս մերոյ, որոյ պատուա-
կան մարմինն նորա եդեալ կայ ի յերկիրն Գեղամայ[28] ի գեղն
5 Վասակաշէն[29], հուպ տամպարանի վարդապետին Սարգսի։ Յիշա-
տակ նոցա յաւրնութեամբ եղիցի և աղօթք նոցա ի վերայ ձեզ
և մեզ եղիցի. և տէրն տէրանց ի վերայ ամենայն աշխարհիս
գթասցի. ամէն։

Իսկ ի ՌԼԴ (1585) թվականին ի խրոխտէն Մուրատայ հրա-
10 ման եղե ի Դամուր դաֆ յառ Օսմանն, գնալ առ ինքն ի Կոս-
տանդինուպոլիս, որ և գնաց իսկ և պատուեցաւ ի նմանէ և զօ-
րապետ և յիշխան || աց յիշխան կարգելով զնայ բոլոր յարեելեանս, 288ա
ի Բիւղանդիոյ մինչև ի Ցալանս.[30] և ետ ի ձեռս նորա զօրս բա-
զում թվով Ո (600) հազարաց և առաքեաց ի վերայ շահասան
15 քաղաքին Թավրիզոյ. որ և եկն իսկ յոյժ խրոխտանօք, առ զնա և
աւերեաց յաւար առնելով զամենայն ինչ որ ի նմայ[31]։ Եւ չինեաց
բերդ, այլ ոչ ժամանեաց յաւարտման բերդին, յանդէն սատա-
կելով ոչ եղեալ արժանի լսելով յաստէն ի թագաւորէն իւրմէ
զգովութիւն իւրոյ յաղթութեանն, և զի հատուցմունք հանդեր-
20 ձելումն նմայ՝ դատողին յամենեցուն է յայտնի։ Իսկ ի յայլ յիշ-
խանաց և գլխաւորացն բազում պատերազմաւ ընդդէմ կացեալ
Կարմրագլխացն և յաւարտեցին զբերդն, և կարգեցին ի նմա
զօրս ծառայ[32] յանուամբ և կացուցին զօրապետ նոցա յոմն ներ-
քինի Ջաֆար անուն. և ինքեանք դարձան ի տեղի իւրեանց
25 տանելով ընդ ինքեանց զանմաքուր շաղիղ նորա։

Այսուհետև դարձցուք ի կարգ պատմութեան Կարմրագլ-
խացն։ Քանզի էր այսու ժամանակաւ թագաւոր նոցա, յառաջ
ասացեալ, Խուդարանդայն։ Եւ սորա գուն գործեալ ընդ զաւրաց
Յօսմանին յոյժ ջանիւ, յաճախ վշտօք, բազում յաշխատութեամբ,
30 յոլով յաւուրց պատերազմաւ, և յերկոցունց կողմանց յանչափ
արեանց հեղմամբ, և ոչ կարաց խափանել զնոսա ի գործոյ շի-
նութեան բերդին Թավրէզոյ։ Եւ յայնժամ դեռ ևս ունէր ընդ
ձեռամբ զՄեաւ այգի[33] կոչեցեալն և զԳանձակ, որ է Գանջայ։ Եւ
շահն գնացեալ յանդ հանդերձ պատանի յորդոնն իւրով, Յամիր
35 Համզայ կոչեցելով, և զօրաժողով եղեն յանդ ամենայն Կարմրա-
գլուխքն՝ խորհել ինչ վասն Թավրիզոյ և[34] Յօթմանի զօրացն։ Եւ
տիրատեաց Կարմրագլուխքն յաւելին զվէրս ի վերայ վիրաց Խու-
տաբանդային, մանաւանդ յինքեանց ևս կրկին և երեկքին. վասն
զի այն եղև բեկումն նոցա վերջստին, զի սրախոց ի գաղտնի
40 սպանին զզորդի շահին[35]. քանզի շուք թագաւորի ի տղայն երև-
էին և ի նմանէ Կարմրագլուխ Պարսիկքն յոյժ երկրնչէին։ Եւ

---

1 եկեղեցւոյ։ 1—2 յալեւորեալ ի յերկիրն Գեղամայ լի յաւուրքք։ 3 Ի (20) չիմ, թուականիս։ 4 ի յերկիրն Գեղամայ չիմ, գեղն։ 5 դամբարանի։ 6 յօրհնութեամբ։ 8 ամէն չիմ։ 9 թուականին։ 10առ Օսման։ 11 և (զօրապետ) չիմ։ 12 զնա։ 14 թուով։ 15 Թաւրիզոյ։ 16 կամ փխ. զամենայն։ 20 ծառայ փխ. նմայ։ 25 շաղեղն։ 29 զօրաց։ 32 Թաւրիզոյ։ 36 Թաւրիզոյ։ 37—38 Խուդարանդային։

իբրև այս այսպէս եղև, ցբրուեցան Պարսիկքն ըստ իւրաքանչիւր
ոք, ոչ դիտելով զտեղի իւր, իբրե զդիշատեալ հօտ որոց ոչ իցէ
հովիւ։ Եւս և զի խրոխտ հրաման Թագաւորին Մուրատի Յօթ-
մանցոյ պատեալ էր զնոսա որպէս զկղզի նման ծովոյ։ Եւ շահն
5 Խուտաբանդայ յոյժ հեծեծանօք և || թախիծ սրտիւ ելի տրտմու- 299 բ
թեամբ գնացեալ ի Խորասան առ միւս որդին իւր Յարաս[36],
յանդէն թողեալն ի գալն իւր յԱտրբպատականս՝ տիրել Խորա-
սանայ. առ նա հասեալ Խուտաբանդային և յետ սակաւ յամաց
ինքն մեռաւ, ոչ ինչ քաջութիւն ցուցեալ յաղգի իւրում յանա-
10 ռին այն։ Եւ թագաւորեցաւ Յարաս որդի Նորա ընդ նմա, յոյժ
քաջ և յաղթող ի պատերազմի. վասն զի զԳիլան, որ՝ և Զօրջա-
նեթ յապրստամբեալ ի հօրէ Նորա, Յտրասն քաջութեամբ նուաճ-
եաց զնոսա ընդ ձեռամբ։ Այլև Յօղբէկն կոչեցեալ ի Բալխա և
Բուխարայէ ելեալ էառ զՀէրի քաղաք[37] և այլք ի տեղաց շահին
15 և ընդ ձեռամբ արար, մինչդեռ նա ի Յարտաւէլն էր գնացեալ
վասն նուիրանաց և ընծայից բաշխելոյ յառ շիրմի հարցն իւրոց
և հաւուցն։ Եւ լուեալ դարձաւ յանտի և գնացեալ զՕղբէկն՝ զոմն
կոտորեաց և զոմն փոխոյց և զտեղիքն իւր զարձեալ հաստատ-
եաց։ Այլ և յերկիցս ե երիցս յանգամ զօրս արձակեաց ի վերայ
20 նոցա. և յետոյ ինքն գնացեալ զբազումս ի նոցանէ սպան յոյժ
պատերազմաւ. և զորդի թագաւորի նոցա ըմբռնեալ դարձաւ ի
տեղի իւր ի Ղազին. և այնպէս նուաճեաց զնոսա։ Եւ է թագա-
ւորն Յարաս յոյժ խաղաղասէր, մանաւանդ քրիստոնէասէր, որ և
ասի ի վաճառականաց, թէ ի տան գանձի իւրում զնշան սուրբ
25 խաչին պատուով պահեալ ունի. և ի ժամ պատերազմի ի ծոց
իւր բարձեալ տանի ընդ իւր։ Եւ այժմ է յիշխանութիւն Նորա
ի Խորասանայ մինչև յԱրտաւէլ և ի Յերասխ դետ։

Իսկ ի Ռվէ (1588) թվականին զարձեալ հրաման ել Մուրատ
խոնդկեարէն յումեն Ֆարհատ կոչեցելոյ, յառողի և շինողի
30 Յէրեանայ, զոր յառաջ քան զՕսմանն նայ յունէր զզօրապետու-
թիւն կողմանս յարևելից յետ Լալային, և այժմ վերստին զիւր
յառաջին իշխանութիւնն շնորհեաց նմայ. և առաքեաց ի վերայ
Գանճայոյ՝ հեռացուցանել զմնացեալ սակաւ Կարմրագլուխքն, որ
յանդ և շինել ի նմա բերդ և դառնալ[38]։ Որ և եկն իսկ ծանր զաւ-
35 բու և արար ըստ հրամանի խոնդկեարին։ Հերքեաց, մերժեաց,
հեռացոյց, տարակացոյց, յուրոյն կացո[յ]ց, զատացոյց, ի բաց
կացոյց, հալածեաց, փախըստական արար, վտարեաց, մեկուսա-
ցոյց. և ինքն զհետմտեալ մինչ ի դետն Յերասխ և զբազումս
գերեաց և զորս ետ ճարակ սրոյ այլ և գետահեղձ արար զյոլովս։
40 Եւ ինքն դարձաւ և շինեաց բերդ ի Գանճայ և կարգեաց || ի նմա 270 գ
զաւրս, ըստ յօրինի իւրեանց ծառա կոչմամբ. և ինքն դարձաւ

---

1 այսպէս չիմ, ցբուեցան։ 2 զդիշատել։ 3—4 յօսմանցւոց։ 7 անդէն։ 13 և չիմ։ 14 Բուխարէ։ 16 նուիրանաց։ 17 զՕվրէկն։ 19 անդամ։ 22 նուաճեաց։ 27 յԱրտաւել։ 28 թուականին։ 29 խոնդկարէն, Ֆահրատ կոչեցեալ։ 30 նա, ունէր։ 32 իշխանութիւն։ 33 Կարմրագլուխն։ 34—35 զօրօք։ 35 խոնդկարին։ 37 փախստական։ 40 Գանջայ։ 41 զօրս, ծառայ։

առ կայրսն իւր։ Իսկ շահն Ցարաս յորժամ ետես զեղեալքս յամենայն առ աշխարհն իւր՝ երկեաւ ևս վասն տեղոյ շիրմից հարցն իւրոց և հաւացն զՑարաւիլ գուցէ առցեն. և յառաջ ի ներս ի Պարսիկս ևս ճեպեսցեն. դեսպանս առաքեաց, հրեշտակութիւն
5 յարձակեաց[39] առ Մուրատ խոնդկեարն յառ ի խաղաղութիւն համոզել և սէր ընդ միեանս ունել։ Եւ ընդ այս ոչ եղև լսելի գոռողին, պատանդս խնդրելով ի նմանէ։ Եւ շահն Ցարաս յաւել ևս առաքել զեղբօր իւրոյ զորդին հանդերձ մեծ իշխան դայեկաւ և յերկերիւր զինակիր սպասաւորով առ խոնդկեարն՝ ճեալ
10 պատանդս յանդէն ի Ցստամպոլ վասն խաղաղութեան միջի իւրեանց, որ և խաղաղութիւն եղև իսկ։

Եւ ի ՌԽ[Դ][40] (1595) թվին մեռաւ Մուրատ խոնդկեարն և թաղաւորեցաւ սուլթան Մահմեա որդի նորա ընդ նմայ։ Եւ յաւուրս այս Մահմետի յարեան Ֆռանկքն, որ Մաճարք կոչին,
15 ի վերայ ծովու բազում նաւօք. և են պատերազմ ընդ սոցայ յամս[41]։ Եւ ամենայն յամի յառնեն ընդ միմեանս յահադին և սաստիկ պատերազմաւ և կոտորմամբ յիրերաց, որպէս տապաւորս և կացնաւորս մայրահատաց հատանեն սպառելով զմիմեանս հրով և որով։ Եւ ի միւս յամին յերկաքանչիւր կողմանց
20 յարքսէ իւրեանց դարձեալ զօրս հասեալ լինի ի թիկունս և լինի նոր նորոգեալ պատերազմն յետինս ամի կրկին ևս քան զյառաջիսն յամ։

Եւ ի թվականիս ՌԽԹ (1600), յորում եմք, է այսպէս և զյապագայն տեառն Աստուծոյ է յայտնի, թէ զինչ լինելոց է
25 յայնմ, որում շնորհելոց է կողման ինչ պարտութիւն և կողմանց ինչ յաղթութիւն։ Զի գրեալ է, ոչ թէ զօրութեամբ զօրանայ հզօրն, այլ տէր ակար առնէ զհակառակորդն։ Տէր սուրբ է և նա կարողացուսցէ զհաւատեալս խաչին իւրոյ։

Այժմ դարձեալ երկրորդեսցուք վասն Սիմոնի թագաւորին
30 Վրաց, թէ զինչ եղև. քանզի Սիմոնն, յորժամ վախեաւ ի Լալայէն, գնացեալ ի յանկեան յուրէք ինչ իւրոյ յաշխարհին, բնակէր ի մացառ և ի կապան տեղիք և ի սիրտ իւր խոցեալ լինէր վասն յառման յերկրին իւրոյ. և հնար իրացն ոչ ինչ կարէր գտանել, վասն յոյժ խրոխտ լինելոյ համբակին իւրոյ, սպասէր խնա-
35 մոցն Աստուծոյ։ Պատգամս յղէր և հարկս խոստանայր Մուրատին, երբեմն տալով և երբեմն ոչ տալով[42], յապըստամբէր ի նմանէ և յաւազակ ի վերայ բերդիցն յարձակէր պատճառն զզօրաւք բերդիցն արկանելով առ Մուրատ թագաւորն համբաւէր և ի նմանէ զվնասն նմայ շնորհեալ լինէր։ Եւ յորժամ թագաւորեաց
40 սուլթան Մահմետն, Սիմոնն զխորհուրդ յապըստամբութեանն

1—2 ամենայն։ 2 և փխ. ևս։ 5 արձակեաց, խոնդկարն առ։ 9 սպասաւորք, խոնդկարն։ 10 անդէն, Ցստամբոլ։ 12 ՌԽ թուին, խոնդկարն։ 13 Մահմեան, նմա։ 14 յաւուք, Մահմէտի։ 15 նաւուօք։ 16 ահագին։ 20 յարքայէ։ 21—22 զառաջինսն։ 23 թուականիս։ 23-rդ տողից մինչև 25-rդ տողը՝ յորում եմք է այսպես...յայնմ չիք։ 25 յորում, կողմանս։ 27 զհակառակորդն։ 31 ուրեք։ 36 յապստամբէր։ 37 դզօրք։ 40 Մահմէտն, յապստամբութեանն։

իւրոյ յայտնեաց այսպէս՝ զհարկն ոչ տալով է զաւազակն յոյժ
բաղմացուցանելով, յաւել ևս ինքնին զօրաժողով եղև. և յարեաւ
ի վերայ բերդին Գօրոյ[3] || և յամիսս Ը (8) նեղեաց զնոսա և առ 270 բ
ղնա. և քակեալ զքարինս բերդին յողամբ յայլազգեացն տանել
5 հրամայեաց և ի Կուր գետն յարկանել։ Եւ ապա զարսն կոտոր-
եաց սրով և կանայք և զորդիք նոցա յաւար բաշխեաց զօրաց
իւրոց Վրաց։

Ի յայսմանէ յամենայն ազգն Հագարու ի սիրտ և ի խոր
խոցեցան և յոյժ սրտմտեալ և ի բարկութեան և ցասման հարեալ
10 Մահմեա խոնդկերին և յոյժ տագնապաւ հրաման եհան և զտեղի
Ֆահրատին և զիշխանութիւն նորին տալով ներքինոյն Ջաֆարի[4],
որ ի Թավրէզ։ Եւ առաքեաց ի վերայ Սիմոնին, յառնուլ զվրէժ
յանարգանաց և արեան յօթմանական և իսմայէլական գնդին։
Եւ յորժամ ի Թագաւորէն էառ համարձակութիւնս այս, երկրորդ
15 վիրագ, չեզոքն այն Ջաֆար, յոյժ խրոխտացաւ և արձակեաց
հրաւիրակս ընդ կողմանս յիշխանութեանն իւրոյ և ինքն ել ի
Թավրիզոյ եկն յԱրարադ։ Եւ ժողովեցան անդ ամենայն հրա-
ւիրեալքն առ նա զաւրք բաղում։ Եւ սուրհանդակք յարձակեալ
ի հեռաւոր տեղիս՝ դեղից և քաղաքաց, տանել կերակուր ինք-
20 եանց և ձիոց, պատրաստել յանցս ճանապարհաց իւրեանց։ Այլ
և թիւս քսան հազար յարանց յարկեալ ռամկաց Հայոց և Տաճ-
կաց, ամենայն յաշխարհաց, յունելով ի ձեռս իւրեանց՝ յորթուց և
թիաց, տապարաց և կացընաց, բահաց և վայաատաց, բրիչ տանց
հիմանց.այլ և խիստ էառ հարկս ի ժողովրդենէ յարտաքսյ նօմօսաց
25 իւրեանց։ Եւ ապայ ելեալ գնաց յոյժ երկիւղիւ, զի վաղուց հեաէ
զվորձ առեալ էին բազում անգամ ի քաջութէնէն Սիմոնի և ի հնար
յիմաց պատերազմաց նորա. և ի նմանէ պարտեալ յամօթալի
դիմօք յետս էին դարձեալ։ Եւ այժմ, իբրև հասին յերկիրն Վրաց
գնոյն կարծելով երկնչէին և զտեղի առին յաւուրս Գ (3) և չև ևս
30 էր եղեալ զմարտ ճակատուն և ոչ պատգամս և դեսպանս առ
յիրեարս գնացեալ։ Եւ Վրացն խորհեալ ընդ միմեանս յասեն առ
Սիմոն. «Թոյլ տուր այսօր տարցուք զտունս և զընդանիս մեր
յառ լերամբք և մեք դարձցուք յամենայն սրտէ և յամենայն
զօրութէնէ մերմէ յարեան չափ և մահու պատերազմեսցուք ընդ
35 Թուրքացն և յաղթեսցուք նոցա, զօրութեամբն Աստուծոյ։ Բայց
վասն բնաւին բառնալոյ զսահման յաղօթից ի յազգէս քրիստո-
նէից, մինչ զի ի բոլոր տարին յամենևին ի դուռն եկեղեցոյն
ոչ ընթանան ի փոքունց մինչև ի մեծամեծս, վասն այսր յի-
րաւունքն յԱստուծոյ ոչ ետ թոյլ կատարիլ խորհրդոցն Վրաց.
40 զի ասէ Աստուած մարգարէին. «Ապա թէ ոչ դառնայք առ նա,
զսուր իւր սրեալ է և զաղեղն լարեալ». || և կամ թէ ասէ. «Մի- 271ա
թէ՝ վերանայցէ փայտատ առանց փայտահարի և սղոց առանց
ուրուք ձգելոյ». և դարձեալ ասէ. «Ես սպանանեմ և ես կեցու-

3 Գորոյ։ 4 հողամբ։ 5 գէան։ 10 Մահմէդ խոնդկարին։ 12 Թաւրէդ. 15 չէղոքն։ 16 յիշխանութեան։ 17 Թաւրիզոյ։ 18 զօրք։ 21—22 Տաճկած։ 23 կացնաց։ 25 ապա։ 31 աւեն։ 32 զընտանիս։ 33 առ։ 37 եկեղեցւոյն։

ցանեմ, հարկանեմ և ես բժշկեմ». և կամ ասէ. «Զի զոր կամի տէր կորուսանել՝ յիմարեցուցանէ»։ Վասն որոյ յիմարեալ Սիմոնին այժմ նստի ի դինի սակաւ արամ[բ]ք։ Եւ յայնմ կողման, յորում էր Սիմոնն, Թուրքացն յամենևին ոչ ունելով կարծիք զՍիմոնին յանդ լինելն, բայց յաւարի պատճառաւ, Թուրքացն դունդ ինչ բաժանեալ և ի կողմն այն գնացեալ և տեսեալ զՎրացի յոմն ըմբռնեն. և յառաջ ինչ գնացեալ սակաւ զՍիմոնին գունդն տեսանեն. և ի ըմբռնելոյն հարցեալ զյովն լինել այնմ և լուեալ ի նմանէ, թէ նայ ինքն իսկ է Սիմոնն։ Եւ Տաճկացն յոյժ երկուցեալ յետս կանգնեն. և վաղվաղակի յարս զօրաւորս յարագընթաց երիվարոք առ բանակն հասուցանեն և Զաֆար զօրապետին յայտնեն։ Եւ նորա յոյժ զարմացեալ և բազում քաջարանց խրախուս տուեալ յառաքէ։ Եւ գնացեալ ըմբռնեն զՍիմոնն և բերեն յառ նա[14]։ Եւ ի գալն յելեալ ընդ յառաջ Զաֆարն յողջունել զՍիմոնն, և ապայ ի լեզուս իւրեանց մեծաձայն հնչմամբ աւրհնեցին զԱստուած ի լուր բանակին։ Եւ Սիմոնին զնոյն երկրորդեալ ասէ. «Օրհնեալ է Աստուած և անփոփոխ տէրութիւն նորա. զի տէր մեռուցանէ և տէր կեցուցանէ, յիջուցանէ ի դժոխս և հանէ»։ Եւ Զաֆարն յանդէն սուրհանդակ յարձակեալ առ խոնդկեարն յաւետել նմայ. և ինքն առեալ զՍիմոնն ժամանէ ի Թավրէզ։ Եւ հրաման ել ի խոնդկեարէն յամենայն տեղիք տէրութեանն իւրոյ զարդարել զփողոցս քաղաքաց և յամենայն ոք յաւուրս երեդ նստել ի խրախութիւն ընդ տիւ և ընդ գիշեր և եղև այնպէս. և զՍիմոնն առ ինքն տանել։ Եւ Զաֆարին պահեալ զՍիմոնն ի Թավրէզ յաւուրս ձմերան և գարնան և ի յամարան[15] ժամու յառաքեաց առ կայսրն, որ ի Բիւզանդիայ. և ի գնալն հասեալ ի Կարնոյ քաղաք, զտեղի առին վասն յումեմն յիշխանի հրովարտակաց դպրի, որ ի լեզուս իւրեանց Եազըչի ասի. ընդ իւր յունելով արանց յաւելի քան ԻՌ (20000)-աց յապըստամբելոյ ի յաւաքէն իւրմէ և ի թագաւորէն ևս։ Եւ այս երկու յամ է, որ զդլխահարկ ժողովրդեանն, որ վասն թագաւորաց է, յինքն կորզեալ ժողովէ։ Այլ և վասն Սիմոնին զգուշութեամբ պատուէր տուեալ է զօրաց իւրոց յափշտակել ի տարողացն և առ ինքն հասուցանել. յաղագս այս պատճառի Սիմոնն յարգելեալ կայ ի Ցարզրում քաղաքի։ Աւրհնեալ է Աստուած, զի վերջն նմա է գիտելի։

---

3 արամք։ ՀՀ անդ։ 8 զով, լուեալ։ 11 երիվարոք։ 12 զուարճացեալ։ 13 խրախոյս։ 14 առ։ 15 ապայ։ 16 օրհնեցին, ի բոլոր փխ. ի լուր։ 17 օրհնեալ։ 18—19 իջուցանէ։ 19 անդէն։ 19—29 արձակեալ։ 20 խոնդկարն։ 21 Թաւրէզ, խոնդկարէն։ 22 տէրութեան։ 22—23 ամենայն։ 25 Թաւրէզ։ 26 յամառան, առաքեաց։ 28—29 Եազչի։ 29 ունելով, աւելի։ 39 յաւազէն։ 35 օրհնեալ։

ԾՈՆՕԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովանիսիկ Ծարեցու ժամանակագրության բնագիրը «Ճռաքաղ»-ում և Ս. Անեցու ժամանակագրության հրատարակության հավելվածում լույս է տեսել այստեղից, մինչդեռ բնագրում «Արդ գնեղութիւն» բառերին նախորդում է Հովանիսիկ Ծարեցու ընդարձակ հիշատակարանը, որը բերում ենք ամբողջությամբ.

«Փառք պատիւ և զոհութիւն հօր և որդոյ և սուրբ հոգոյն ամէն։ Արդ՝ ես մեղուցեա Ծարեցի նըւաստ Յոհանէս վարդապետս, որդի Մելքոնին, որդոյ Միրզաջանին, յորդոյ Ջահանշահի, որոյ որդի նորին մեծ վարդապէտն Յոհանէս ի ՋՁ (1531) թվին ստացեալ էր այս սուրբ գիրքս դատաստանաց։ Եւ ես ի Ռ և ի ԽԹ (1600) թվիս նորոգել ալի զսուրբ մատեանս յիշատակ ինձ և կրկնակի ծնողացն իմոց՝ Մելքոնին և Փիանղին և եղբարցն իմ Թումայ իբիցոյն և նորին որդոյն՝ Ռստակէս իբիցոյն, և միւս եղբօրն իմ Միրզին և հանդուցելոյն [Ու]լուխանին և քւերցն իմ Փարինխան[ին], Սուլթանին, Նաղլուխանին և հօրեղբօրն իմոյ Յուղուրլուին և յամենայն. արեան մերձաւորացն մերոց կենդանեաց և ննջեցելոց։ Արդ՝ աղաչեմք զձեզ որք պատահիք և յօդաիք ինչ ի սմանէ յիշեա զմեծ վարդապետն Յոհանէս և զիր (№ 8245 տարբերակում հիշատակարանն ընդհատվում է այստեղ և ապա սկսվում ժամանակագրությունը—Վ. Հ.) զփոքր Յոհանիսիկս և զիմ ծնողքն. և սըրտի մտօք Աստուած ողորմի ասացէք մեզ և յամենայն վերոյ գրելոցս ի սմայ։ Եւ Քրիստոս Աստուած, որ յառաստէ ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ և մեզ յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի ի յօրն յահեղին ամէն։ Նորոգեցաւ սուրբ կտակս ձեռամբ յԱլեքսանոս կրօնաւորի, Աստուած զինքն ընդ սրբոյն Յանտոնի և Եղիսանիդեայ և եօթնից ընկերացն դասակցեսցէ և ծնողաց նորին ողորմութիւն պարգևեսցէ. ամէն (էջ 266ա և բ)։

2. Հայագիտության մեջ կարծիք կա, որ Արշակունյաց ժամանակ «շէնն»-ը չի դրծածվել ավան, գյուղ, դաստակերտ առումով, այլ բնակիչների կամ ժողովուրդների, որ «շենը» գերությունից կամ ստրուկ կանանցից մայրական ընտանիքի միջոցով գոյացած բնակիչներն էն, որ «շենը» ցեղի ստորադաս մասն է (մանրամասնությունները տես Ս. Բահաթրյանց «Հողային և անձնական իրավունքը Հայաստանում», «Մուրճ», 1894, № 3, էջ 425—432)։ Թեև այս տեսակետն ունի վիճելի կետեր և ապացուցման կարիք է զգում, համենայն դեպս «շենն» և «անշենն» արտահայտությունները, որոնք մեր մատենագիրների մոտ հաճախ ենք հանդիպում, սոցիալական բովանդակություն ունեցող հասկացություններ են։ Այստեղ այդ արտահայտությունը, ի հարկե, վերոհիշյալ իմաստով չի գործածված, այլ բոլոր վայրերը, ամենուր, թե հարուստ, բարելի և թե ոչ հարուստ, թալանել են։

3. Բնագրում «ճարակ և թաղստեան» բառերը վերցրած է շրջանակի մեջ։

4. Ըստ երևույթին այս հատվածը նկատի ունենալով, Ալիշանը ենթադրում է, թե «այլ բան պակասի տպագրսւածին մէջ» («Հայապատում», Ա, էջ 129)։ Մեր թվում է, հեղինակն իբենից առաջ տեղի ունեցած դեպքերն ընդհանուր կերպով, որպես ներածական, բերելուց հետո, նշում է, որ այդ մասին «յառաջնոցն էր գրեալ», իսկ ինքը կոնկրետ դեպքերը շարունակում է իր ժամանակաշրջանից սկսած։ Հետևապես Հովանիսիկ Ծարեցու ժամանակագրության բնագիրը լրիվ է։

5. Ա. Դավրիժեցու պատմության մեջ առաջաբկվող ժամանակագրության բնագիրն սկսվում է այստեղից (էջ 605)։ Ինչպես տեսնում ենք, Ա. Դավրիժեցին բաց է թողել ներածական մասը, մեջբերելով հեղինակի ժամանակակից դեպքերի հիշատակությունը միայն։

6. Բնագրում «բաջ» ձևով. այնուհետև ձախ լուսանցքում գրիչն ուղղել է նշելով «պաջ»։

7. Իմա Իսմայել II, շահ Թահմազի երկրորդ որդին։ Սրա բանտարկության մասին բավական մանրամասն է խոսում Վենետիկի դեսպան Վինչենցո Դ՝ Ալեսանդրին. սա նշում է, որ «ավելի քան տասնյոթը տարի է, որ նա բանտումն է» («Ուղեգրություններ», հտ. Ա, էջ 335—336)։ Եվ որովհետև Վ. Դ՝ Ալեսանդրին Պարսկաստանում եղել է 1571 թվին, նշանակում է Իսմայել II-ին բանտարկել են 1554 թվին, թեև 1560 թ. ընդօրինակված Հայմավուրքի հիշատակարանում բանտարկությունը նշված է 1557 թվին. այնտեղ կարդում ենք. «...դրծեցի զտասս ի թվականիս Հայոց Ռ և թ (1560), ի հայրապետութեան տեառն սուրբ Լիմիածնին տէր Ստեփանոսին... և ի զալ|նութ|եանն աշխարհիս շահ Թահմաս|զի|ն, որ նենդութեամբ սպան և կորոյր զԴ (3) եղբայրն, և զորդին իւր եղեալ է ի բանդ Գ (3) տարի և զվերջն Աստուած գիտէ» (Ms 628ա, էջ 625բ—626ա)։ Ինչպես մեր հեղինակը, այնպես էլ Վ. Դ՝ Ալեսանդրին բանտարկության պատճառը նշում են «վասն... յանդգնութեան», կամ «ինասասիրական տեսակետներ ունի» և այլն արտահայտություններով։ Սրա բանտարկության մասին տես նաև Մծ, 1, էջ 195։

8. Այս բասը գրված է ընդգրի 267ա էջի վերևի լուսանցքում։

9. Լեն-Պուլի համաձայն Իսմայել II-ն իշխել է 1576—1578 թթ., իսկ Մուհամմեդ Խուդաբենդեն, 1578—1587 թթ. (էջ 219)։ Վերջինս շահ Թահմազի անդրանիկ որդին էր, որը, ինչպես նշում է Վ. Դ՝ Ալեսանդրին «շատ չի հետաքրքրվում աշխարհիկ գործերով, դոհ է իր հոր կողմից իրեն տրված փոքրիկ կալվածով, Խորասանի շրջանում, կոչված Բերի» («Ուղեգրություններ», հտ. Ա, էջ 335)։

10. Իմա Մուրադ III։

11. Պարսկա-Օսմանական հերթական կռիվներն սկսվեցին 1578 թվին։ Թուրքական բանակին ղեկավարում էր Մուստաֆա Լալա փաշան, իսկ պարսկական բանակին՝ Թոխմախ խանը։ Երկու բանակների ճակատամարտը տեղի ունեցավ 1578 թվի օգոստոսի 9-ին, Չըլդրի մոտ, որտեղ թուրքերը հաղթանակ տարան և մտան Վրաստան (մանրամասն տե՛ս J. Hammer „Geschichte des Osmanischen Reiches" Zweiter Band, Pesth, 1834, էջ 480 - 481)։

Ժամանակակիցներն այդ դեպքերը նկարագրել են մոայլ. դույներով (տե՛ս, Դ. Սբրանձտեան «Թորոս աղբար», մասն Բ, էջ 268—269, ԼԾվ, էջ 9 – 10, ՍՃվ, հտ. Ա, էջ 667 և այլն)։ Բերում ենք այս և հաջորդ երեք տարիներին վերաբերող մի հետաքրքիր հիշատակարան. «...Արդ գրեցաւ սա յամի Ռ և Լ (1581) թըւականիս մերում... ի թագաւորութեան Տաճկաց Բուղանղիոն, որ այժմ Ստամբոլ ասի, սուլթան Մուրատայ, զոր հրամայեաց նախարարաց իւրոց և առաքեաց ի Վան առ Խոսրով փաշայն իւր, թէ «Ժողովեա զդաւրս քո և եկ գնա ի վերայ Կարմիր գլխու աշխարհին ի սահմանս Թաւրիզոյ յառ և յաւար հար զտեղս և զերկիր նոցա, սպան, գերեցոյ, այրէ և աւերեայ և ի յետս դարձիր»։ Եւ յորժամ լուաւ զհրաման թագաւորին իւրոյ մեծ փաշայն Խոսրով և ժողովեալ բազում զաւրս և յաւուր պահոց Առաջաւորին ասպատակեալ գիմեցին և գնացին դէպ յարևելս ի վերայ գաւառաց շահին, որ Կարմիր գլուխ ասի։ Եւ գնացեալ հասին մինչև ի Թավրէզ և ի Նախչուան և զրաղում քաղաքս և զգեղս և զդաւառս աւերեալ քանդեցին. զարսն սրով սպանին, զկանայսն և զտղայսն զերի վարեցին և այնչափ անողորմ արարին, զի զտղայսն որորանով կալեալ և ընկեցին ի վառեալ թոնիրն ի մէջ կրակին։ Եւ այլ ևս զի զտղայքն ի գիրկս մարցն ջամբէին զստինսն, և յանկարծ հասանէին ի վերայ նոցա, զմարսն սպանանէին և արիւնն և կաթն իրար խառնէին և ջամբէին մանկտիքն և ոչ գիտէին զվայս իւրեանց։ Եւ ետ այնորիկ բրէին նիզակ և հարկանէին զտղայսն ի ծայրս նիզակաց և վերացուցանէին զնիզակսն յերկինս ի վեր և հարկանէին զտղայս ի վերայ քարի և ի վերայ փայտի և սպանանէին. և ոմանք հարկանէին զտղայսն ի ծայրն նիզակացն և վերացուցեալ զնիզակսն տընկէին զմիւս ծայրն ի գետին, և տղայքն ի վայրի ծայրն աղաղակէին և ճչային, թալկանային և ի սաստկութենէ ձմեռանն սառեալ մեռանէին։ Եւ այլ բաղում աղգի աղգի հնարս գործեցին, զի ոչ կարեմք պատմել և ոչ զագէտսն ընդ գրով արկանել։ Եւ յորժամ հասաք ի Համրարձումն առաքեաց թագաւորն Մուրատ զմի ի գլխաւոր փաշայից իւրոց, որ մականուն Լալա փաշա կոչի ՀՌ (70000) արամբք, ի մեծ քաղաքն Ցարդռում, թէ «Գնայ և շինէ զԿարս (ընագրում «զԿայսր» ձևով) քաղաք», որ ի բաղում ժամանակաց աւերէր, զի սինոռ է Բ (2) թագաւորացն։ Եւ նա եկեալ բանակեցաւ ի դաշտս Բասենու. և հրաման ել յաշխարհս և ժողովեցան բաղում ճարտարք և քարագործք և ձեռն արկեալ շինեցին զրերդն և զքաղաքն առ ի հակառակութիւնն Կարմիր գլխուն։ Եւ յորժամ աւարտեցաւ քաղաքն՝ քարոզ հնչեաց և ասպատակեալ գնացին դէպ յարևելս՝ ի յերկիրն Կարմիր գլխոյ մինչ զքսան աւուր ճանապարհն աւելի ի Կարսա

(ընդգրում «Հայոցաց» ձևով), Ցե[ղե]ւան, ի Շրուան և մինչ ի Թաղաւորական մեծ քաղաքն Տփխիս։ Զայս ամենայն քաղաքս և գաւառս անմարդաբնակ արարին և զմեծ աթոռն սրբ. էջմիածին ցիր և ցան արարին՝ զկաթողիկոսն և զմիաբանքն. և յաւուր միում դնացեալ ի վերայ Երևան քաղաքին և բերին դերի ոգիք ԻԴՌ (24000) քահանայք և ռամիկք, կանայք և աղայք։ Զի Գ (3) դիմաց պատուհաս պատեալ էր զաշխարհս վասն մեղաց իմոց՝ մահ, սուր և սով. մինչ զի շատ ոք ի Տփխիս քաղաքի շուն և կատու կերան։ Եւ Թաղաւորն կարմիր ղլխոյ փախստական լինէր, զի ոչ կարէր ընդդիմանալ նոցա։ Այս երեք ամ էր, որ աշխարհս ամենայն երերմանի կայ. և զվերջն միայն աէր ինքն զիտէ, Թէ ինչ ա՞ լինի։ Յայս դառնութեան աւուրքս աւաղեցաւ ոսկրափոր Ճառընտիրս ի Խլաթ քաղաքի ի պատուական և յընտիր աւրինակէ...» (ՄՄՄ գործ, № 31, էջ 25—26)։

12. Իմա, Թուրքիա։

13. Փարսի Թաղաւոր Սիմոն I։

14. Վրաց Թաղավոր Սիմոն I-ը դերվեց 1569 Թ. Փարցխիսի մոտ (Ալդետի Գավառում) տեղի ունեցած ճակատամարտում վրացիների պարտությունից հետո։ Նա բանտարկվեց Ալամութ բերդում և աղատվեց գերությունից 1578 Թվին։

15. Իմա Դերբենդը։

16. Իմա Օսման Ցուղեմիր, Օսմանյան Թուրքիայի արյունարբու զորավարներից մեկը։

17. Օսման Ցուղեմիրի 1580 Թվի կատարած այս ասպատակությունների մասին ահա Թե ինչ է հաղորդում Իսրայել դրիչը. «...գրեցաւ... Ցիսրայել սուտ անուն իբիցու ի ժամանակիս, որ երեկ ազգի ազգի պատուհասն՝ մահն, սովն, սուրն, գերութիւն։ Երեկ Աւսման փաշէն Հոռոմացոց Դամասրդապէն էառ ի աշխարհն Շրվանայ և կոտորեաց ազգս Ղիզիլպաշին, բազում խանս և սուլտանս և արար փախստական։ Երեկ ազգ մի կայր Ղայտաղ կու ասեն և գերեաց բազում տեղիս՝ Ղարայպաղն, Ղարազոլն, Խաչէն, Վարանդայ մինչև Տիղակ. երեկ Սարաար փաշէն Երևան, արար փախըստական Մահմատի խանն, էառ Երևան, Ծաղկունաց ձորն, Լոռ, Եղեկաց ձորն, Շարուր, Գեղա[ր]դունի և շինեաց բերդ մէջ Երևանայ. երեկ Գուրան էառ Խոյ, Սալմաստ և Նախչվան և գերեցին և Թալանեցին, որք հայր զորդի կանչէր և մայրն՝ զդուստրն. վայ և եղուկ ազգիս Հայոց. ի Թվականիս Հայոց ՌԻԹ (1580), երանի մեռելին, վայ կենդանոյն...» (№ 4173, էջ 95ա, հմմտ. Մ՞, 1, էջ 145)։

18. Այս տեղից մինչև 244 էջի, «ըստ գպրացն Դաւթի, որ առ յԵրուսաղեմիս» հատվածը հրատարակված է նաև «Հայապատում»-ի մեջ, (Ա, էջ 596—597)։

19. Բնագրում «յօրոտիցն» ձևով։

20. Բնագրում «Եղուկ Թշվառականիս և պատմութեանս եղբայրք» հատվածը կրկնված է։

21. Այս արշավանքին է վերաբերում Առաքել գրչի 1585 Թ. Արզրումի Դրվնիկ գյուղում ընդօրինակած ձեռագրի հիշատակարանը. «...քանզի յայսմ ամի եղև տարտարոս սաստիկ, վասն ծովացեալ մեղոց մերոց, որ եկեալ Վաղիր փաշան յարևմտից բազում զաւրաւք և անթիւ հեծելաւք գնաց յարևելս ի Շահստան, վասն շինութեան Երևանայ բերդին. և յոյժ նե[ղեց]ին և չարչարեցին ազգս քրիստոն[եա], փախուցին զթումբս Հայկազան [և շ]ատ աւեր ածին, որն ի ցուրտըն պաղե[ցա]ն, որն ի սովն ջարդեցան» (№ 8625, էջ 367ա)։

Երևանի զրավման և բերդի կառուցման, եկեղեցիների քանդման մասին հետաքրքիր տեղեկություններ գտնում ենք 1584 Թ. ընդօրինակած մի Ավետարանի հիշատակարանում «...Գրեցաւ երկիրս Բասենու, ի դեղն, [որ] կոչի Ծառս, ընդ հովանեաւ սբ. Խաչի վանեացս... ի Թուականիս Հայոց ՌԼԴ (1584), որ յայսմ տարոյս գնաց Ֆարհատ փաշայն ԴՇՌ (300000) հեծելաղաւրաւք ի վերայ Երևան քաղաքին, փախոյց զտէրն, որ նստեալ էր անդ, Մահմետ խանն, և շինեաց անդ նորայհիմն բերդ մեծ և զարմանալի, որ բազում Եկեղեցիք խաչ և տապանք քակեցին, և քարն ի բերդն տարան, քրիստոնէից ազգս ամէն թալանուեցաւ, որ առաջ քան հասանել փաշային ի քաղաքն Երևան, Թաջալ ազգն արձակեց ի վերայ քրիստոնէից ազգիս, որպէս գայլք ի վերայ ոչխարաց՝ քշեցին տարան մինչև Դանձայ ի հետ իւրեանցն և անդ թալանեցին, բազումս սպանին և բազումս գերեցին։ Եւ ես անարժ[ան] գծողս անդ թալանած, փախստական եկի և գրեցի սբ. Աւետարանս...» («էջմիածին», 1950 Թ., XI—XII, էջ 87)։ Միևնույն գրիչ Դավիթը համարյա նույն բովանդակությամբ հիշատակարան թողել է 1584—1587 ԹԹ. ընդօրինա-

կած մի այլ Ավետարանում (տես «Էջմիածին», 1950, VII—VIII, էջ 87—88)։ Մի այլ ժամանակագրից հաստատում է միևնույն տեղեկությունները. ՌԼԳ... «...հասեալ ի մուտս Շարվանա և գերեաց զզրոս Հայկազանց եւ թանասուն ԲՌ (72000) գերի տարան այր ու կին, ծեր և տղա, և այլ թիւն անչայն հայրն գիտի, յետո այլ տարին գերեցին Արաբատան զաւառն ԿՌ (60000), և եղաւ սո՛ սաստիկ մեծ և նուազեցաւ զթուս Հայոց, եւ յետո եկաւ անիծած տղն Ջիդախ, Երևա՛ բերդ չինեցին, եկեղեցիքն քակեցին, շատ աւծաց խաչ ցարքեցին...» (№ 9223 ԻԷ, էջ 1ա)։

22. Այս եկեղեցու մասին մանրամասն խոսում է Ե. Շահազիզը («Հին Երևանը», Երևան, 1930, էջ 200—204), նա հենվելով Գր. Գարանաղեցու վկայության («Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1915, էջ 56) և ճարտարապետ Թ. Թորամանյանի կարծիքի վրա դանում է, որ Երկու Լրեսանի եկեղեցին Զորագյուղում չի գտնվում, թեև ինքն ստուգապես նրա տեղը մատնացույց չի անում։

23. Մ. Օրմանյանն Առաքել անունով կաթողիկոս չի ընդունում, թեև Ա. Դավրիժեցին (էջ 42) և 1578 թվի մի հիշատակագիր (Գ. Սրուանձտեան «Թորոս աղբար», մասն Բ, էջ 435) նրան կոչում են կաթողիկոս. այս ժամանակ, այսինքն 1570—1590 թթ. կաթողիկոս էր Գրիգոր ԺԲ Վաղարշապատեցին։ Ա. Դավրիժեցին վերջինիս հետ հիշում է Առաքելին (էջ 438)։ Այդ պատճառով Օրմանյանը սրան համարում է Գրիգոր Վաղարշապատցու աթոռակից (մանրամասն տե՛ս «Աղդապատում», էջ 2286—2288)։

24. Սա Դաղի վանքը չէ, որ գտնվում է Թարթառ գետի ձախ կողմում, Խաթրավանքից բավական վերև և կոչվում է նաև Խուրթ կամ Գոթալ վանք (Բարխուդարեանց, «Արցախ», էջ 203)։ Ժամանակագրության № 8245 տարբերակում սխալ՝ «Տաթևոյ» ձևով. ստույգը՝ Թագեի վանք, որը գտնվում է պատմական Աղահեճ գավառում (Փոքր Սյունիք)։

25. Այս անձնավորության մասին այլ վկայություններ մեզ հայտնի չեն։

26. Ջահանշահի որդի Հովհաննես Ծարեցին իր ունեցած ձեռագրերից մեկը 1580 թվին վաճառում է Մելիքբեկին. այդ մասին Մատենադարանի № 6879 ձեռագրում կարդում ենք. «Արդ՝ ես Մելիքբէկս գնեցի զսուրբ յաւետարանս ի Ծարեցի Հոհաննէս վարդապետէն ԵՌ (5000) դեկան ի թվականութեանս Հայոց ՌԻԹ (1580) ի դառն և ի նեղ ժամանակիս, զի ամենայն կողմանց արհաւիրք է, միթէ՞ Աստուած խաղաղութիւն շնորհէ»։ (էջ 367ա, հմմտ. «Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի» 1921—1922 թթ., Երևան, Ա և Բ, էջ 113)։

27. Ժամանակագրության № 2776 տարբերակում ամսի անունը գրված է կիսատ՝ «յո» ձևով, այն կարող է լինել «յո[ւնվար]», «յո[ւլիս]», թեև սրանցից որն է ստույգ, առայժմս դժվար է ասել։ Թեև ժամանակագրության № 8245 տարբերակում գրված է «յունվար», սակայն մենք կասկածանքով ենք վերաբերվում, թեև դա սկզբնական ընագրից է ընդօրինակված. հնարավոր է, որ № 8245 տարբերակն ընդօրինակելիս գրիչը գրել է «յունվար», այնուամենայնիվ հենց այդ բառն էլ դրեցինք հրատարակության ընագրում։ Ա. Դավրիժեցու բերած այս ժամանակագրության ընագրից բացակայում է «խաղաղութեամբ» և «ի յո | | | ամսոյ Ի (20)» բառերը (էջ 612)։

28. «Ի յերկիրն Գեղամայ» հատվածը ընագրում գրված է ձախ լուսանցքում։

29. Այժմյան Բասարգեչար գյուղը։ Մ. Սմբատյանցը գյուղի Աստվածածնի եկեղեցու բեմի առջև տեսել է երկու գերեզմանաքար, դրանցից մեկը Հովհաննես Ծարեցու գամբարաններ է, ուր կարդում ենք. «Այս է հանգիստ Յովհաննէս վարդապետին ՌԼԲ (1583)», իսկ երկրորդը՝ «Աստ հանգչի մարմին Սարգիս վարդապետի, Ռ (1551)»։ («Տեղագիր Գեղարքունի», էջ 603)։

30. Ընագրում «Ի Ցալանս» հատվածից հետո մի բառի տեղ բաց է թողնված։ Խոսքը թուրքական զորավար Օսման Ցուգդեմիրի մասին է։

31. Օսման Ցուգդեմիրի թավրիզի գրավումը ոմանք սխալմամբ նշում են 1586 թ. (Մծ, 1, էջ 145, 324), իրականում այն տեղի է ունեցել 1585 թվին (Մծ, 1, էջ 159, 173, 203), թեև Բարսեղ Վարաղեցին էլ նշում է 1584 թիվ։ Վերջինիս հիշատակարանը նվիրված է այդ դեպքերին, ուստի բերում ենք մեզ հետաքրքրող ընդարձակ հատվածը. «Իսկ ի վերջին զարուս և ի նսեմ ժամանակիս մեր, եղև բարկութիւն և պատուհաս ի վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց մերոց, քանզի մեծ թագաւորն խոնդքար զօրաժողով արար հեծելոց եօթն հարիւր հազար և ետ նոցա գլուխ զոմն անուն Օսման փաշայ. և եկեալ բազմութեամբ զօրօք ի Թէոդուպոլիս, որ է Արզրում և զչարիսն զոր արար ով կարէ պատմել կամ ընդ դրով արկանել։ Գացեալ անդ աւուրս բազում, որ և զայր մարդիկ ի

զուրս ձգէին. և զկանայս և զկոյս աղջկունս և զաղայս խայտառակէին, այնպիսի պիղծ գործովք էին անօրէն ազգն Մահմէտի. որ և մինչ զի զդեղեցիկ կանայք և զաղայքն ի հետ բերէին և յօտար երկիր ձգէին։ Եւ չուեալ գնաց ի շահաստան ի Թաւրէզ քաղաք. և ելեալ ընդդէմ նոցա ազգն Գարսից որզի Թագաւորին Խուասպանտայի Ամիր Համզա միրզայ. և բանակեցան ճակատ առ ճակատ և զօրքն խոնդքարին հրաձգութեամբ հարկանէին գնոսա. և նոքա յետոյս քարշէին զինքեանս և սոքա հետամուտ լինէին Գարսից և նոքա ի յետ դառնային սաստիկ ձիընթաց արշաւմամբ հարկանէին սրով, նետիւ և նիզակաւ. դրաղումս ի վայր թափէին. և զիկունք արիւնաշաղախ թաւալէին։ Անդ էր տեսանել զվրնջիւն քաջ երիվարացն, ի շոդել սուսերացն, և ի ճօճել ճապուկ նիզակացն, վայ և ճչիւ ազիոզորմ կսկծանացն և տագնապել հոգւոցն ելանելոցն շատ որ առ ոտս ձիոց սատակէին և այլք ահարեկ մեռանէին. բաղում և անթիւ սատակեցան յերկուս կողմանցն և արք երևելիք փաշայք, պարոնայք, սուլթան, և խանք ի փառս սատանայի։ Եւ յետոյ ոչ կարաց զդէմ ունել որզի շահին ընդդէմ բազմութեան զօրացն և կրակին. վասն զի ոչ էին միարան զօրք շահին, թէ մին պատերազմէր՝ նայ շատ որ ի յետ դառնային, վասն չմիաբանութեան. յայնժամ զօրացան զօրք խոնդքարին, և մտին ի քաղաքն Դաւրէժ ՌԼԳ (1584) առ և աւար արարին, զայրս ի սուր սուսերի մաշեցին, զկանայս, զաղջկունս և զաղայս զերի վարեցին, բերդիւ ամրացուցին զքաղաքն, և զրոլորն խանդակ արարին ի յահէ կարմիր գտակին. և եղին անդ երեք փաշայ երեք հազար արամբք, յոլով պատրաստութիւն արարին մտին ի ներս՝ և ամուր փակեցին և ապա միտ եղեալ զլուխ զօրաց խոնդքարին երթալ զէզ յարևելս առ և աւար հարկանել, զդեղ և զքաղաք տապալել ի հիմանց. իսկ համբաւորդն Աստուած ոչ կտրաց ժուժել պղծոյն, այլ յտրոյց ի վերայ նորա մի ի պիղծ ազգայց իւրոց, որ ետ զեղ մահու և ոսատակեաց զնա չարաչար. և ի յահէ զօրաց կարմիր գտակին, ոչ համբաւեցին զմահ պղծոյն, այլ զազգ եղին, զլուխ զօրացն զՎանայ փաշէն զՋղալ Օղլին, որ էր յազգէն Ֆոանկաց, թողին զքաղաքն և զարձան։ Եւ լուեալ զօրաց շահին զհետ մտին և կոտորեցին զրաղումս. և զարձան ի վերայ քաղաքին բոլորեցին և նստան. և զօրքն խոնդքարին որ ի յետս զարձան յոլով չարիս գործեցին. բաղում զիւղ և զաւան անբնակ արարին. կար որ յիւրեանց հարկատուացն զերի վարեցին և յՍտամպոլ հասուցին։ Եւ զարձեալ զօրք կղզմեցին յայսմ ամի անթիւ և չուեալ գնացին յօգնականութիւն նեղելոցն՝ որ ի Թաւրէզ. և էր զլուխ զօրացն, ոմն անուն Ֆահրատ փաշայ. և էր անդ կոիվ սաստիկ, և մեք ոչ զիտեմք պատմել զազէտ և զկսկիծ, զողորմն և զկոծումն և զսրածութիւն, զսով և զդերութիւն, զսասանութիւն և զայլ ազգի ազգի պատուհաս, որ եկն ի վերայ մեր վասն ծուլացեալ մեզաց մերոց։ Երևանայ աշխարհն, քաղաքն և երկիրն, և ամենայն շուրջագոյ զաւառքն ի յանօրէն ազգացն Գարսից և Իսմայելացւոց սրբաջինջ եղև ամենայն աշխարհս քրիստոնէից. զվերջ և զկատարած ոչ զիտեմք. միայն Աստուծոյ է զիտելի...» (Գ. Աղանանցն, «Դիւան հայոց պատմութեան», զիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 34—37)։ Իրենց դառը վիճակի մասին է պատմում Հովհաննես Սերաստացին 1585 թվի իր մի հիշատակարանում.

«Արդ զրեցաւ պատմագիրքս այս ի թվին հայոց ՌԼԴ (1585) ի քաղաքիս Սերաստիոյ ձեռամբս մեղապարտ և անարհեստ զրչի Յովաննիսիս ի թագաւորութեանն սուլթան Մուրատին ի նեղ և ի նուրբ ժամանակիս, զորս բաղում մրրիկ յարուցանէր ի վերայ քրիստոնէից և յիւր ազգին ի տեղիս տեղիս փոխելով և հարկապահանջութեամբ և այլ բաղում վշտաւք կոչահարէր զերկիր։ ...Զի ի մէջ դառնութեանն զրեցի զսայ, զի բռնութիւնն և չար հրամանն թագաւորին սաստկացեալ էր ի վերայ մեր վասն ծուլացեալ մեզաց մերոց, զի ի յայսմ ամի առաքեաց զոմն ի նախարարաց իւրոց, որ եկն ի վերայ քրիստոնէից և զչար սահմանն կատարելով ի յերկիրս Սերասիոյ միայն Ց (300) մանկունս ժողովեաց և արձակեալ ընդ ամենայն տեղիս զնոյն առնէր ի վերա քրիստոնէական տոհմից. բայց ես, եղկելի զրիչս, յէի ըստ մանկութեանն հասակիս երբեմն փախչելով կայաք, երբեմն սարսելով, այսպիսի զառն և զժուար տանջանաւք և հառաչանաւք նաւտրեցի զզիծս...» (№ 1868, էջ 232բ—233ա)։

Այս գեղջը զրական մշակման է ենթարկել Սիմեոն Ապարանեցին։ Նրա զրած ողբը «Ի վերայ առմանն Թաւրիզու, որ առաւ ի Յօսմանէ և այլ ողբ ի վերայ տառապեալ ազգիս Հայոց, ասացեալ .ի Սիմէոնի վարդապետէ » խորագրով տես «Սիմէօն վարդապետի Ապարանեցւոյ վիպասանութիւն սակս Գալհաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի» 1870, Վաղարշապատ, էջ 158—162։

32. Իմա ղուլ, ղուլամ, Օսմանյան Թուրքիայի զորքի մի տեսակը, որ կազմված էր սարուխիներից։

33. Իմա Ղարաբաղ։

34. Բնագրում «Ե»-ը կրկնված է։

35. Խոսքը Խուսարևնդէ շահի որդի Ամիր Համզայի մասին է, որին մեր ժամանակագիրներից ոմանք նշում են թագավոր 1585—1587 թթ. (Մծ, 1, էջ 196, 392), թեև սրան սովորաբար Սեֆյան շահերի շարքում չեն հիշում (հմմտ. Լեն-Պուլ, էջ 219)։

36. Իմա, Աբաս I։

37. Բնագրում մեկ-երկու բառ բաց է թողնված, Ա. Դավրիժեցու բնագրում այդ բանը չի նկատվում (էջ 614)։

38. Այս դեպքերը մի ժամանակագիր նշում է 1589 թ. (Մծ, 1, էջ 145)։

39. Բնագրում «Դևսպանս յարձակեաց, հրեշտակութիւն առաքեաց» ձևով, ուղղեցինք դրչի ցուցումի համաձայն։

40. Բնագրում գրված է «ՌԽ», իսկ երրորդ տառը բաց է թողնված։ Ա. Դավրիժեցու մոտ գտնում ենք լրիվ թվականը «ՌԽԴ» (էջ 615)։ Բաց թողած տառը պետք է լինի «Դ», որովհետև Մուրատ III-ը վախճանվեց 1595 թ. (Հայոց ՌԽԴ) հունվարի 16-ին (J. Hammer „Geschichte des Osmanisches Reichs" Zweiter Band, էջ 845), իսկ Մուհամմեդ III-ն էլ հաջորդում է նույն տարին։

41. Բնագրում տարիների քանակը բաց է թողած, մինչդեռ Ա. Դավրիժեցին իր բնագրում նշում է՝ «ամս հինգ» (էջ 615)։ Հավանաբար այդ հաշվումը կատարել է ինքը։ Օսմանյան թուրքերի և ավստրիացիների միջև այս պատերազմն սկսվեց 1595 թվին։

42. Բնագրում «տոլով» ձևով։

43. Ապստամբները Սիմոն I-ի ղեկավարությամբ Դորիի բերդը պաշարում են 1598 թ. և գրավում 1599 թվի գարնանը։

44. Ապստամբությունը ճնշելու համար թուրքական սուլթանը Վրաստան է ուղարկում Թավրիզի և Վանի բեգլեբեգ Ջաֆար փաշային։

45. 1600 թ. Նախիջևանի մոտ տեղի ունեցած անհաջող ճակատամարտից հետո, Սիմոն I-ը Փարցախիսից ոչ հեռու գերվեց։

46. Դուցե 1601 թ.։